

# ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ.

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989\_2022.3-81

**Հիմնաբառեր.** *համաշխարհային տնտեսություն, տնտեսական ենթակառուցվածք, լոգիստիկա, գնաճ, պարենային ապրանքներ, էներգառեսուրսներ*

Հողվածում անդրադարձ է կատարվում համաշխարհային տնտեսության զարգացման հնարավոր միտումներին՝ ռուս-ուկրաինական պատերազմի համարեքստում: Մասնավորապես՝ լուսաբանվում է Արևմուտքի կողմից Ռուսաստանի նկատմամբ կիրառվող աննախադեպ տնտեսական պատժամիջոցների և, միաժամանակ, Ռուսաստանի կողմից Ուկրաինայի տնտեսական ենթակառուցվածքների ոչնչացման, ինչպես նաև սևծովյան նավահանգիստների շրջափակման ազդեցությունը համաշխարհային տնտեսության լոգիստիկ կապերի վրա: Պատերազմը հանգեցրել է մատակարարման շղթաների խզմանը, պարենամթերքի և վառելիքի գների աճին ամբողջ աշխարհում, ինչի հետևանքով անորոշ տնտեսության և խորության տնտեսական ցնցումներ են առաջացել, որոնք երկարապահ ռազմական գործողությունների դեպքում կարող են դառնալ անկայունության առնվազն միջնաժամկետ գործոն: Նշվում է նաև, որ մոտ ապագայում շար երկրների համար հիմնական խնդիրը կլինի գնաճի զսպումը, քանզի գնաճի տեմպերն են այն մակրոտնտեսական ցուցիչը, որն առաջին հերթին ազդում է դրամավարկային քաղաքականության և սպառողների շրջանում ձևավորվող սպասումների ու վարքագծի վրա: Կատարվում է եզրակացություն, որ ռուս-ուկրաինական շարունակվող պատերազմը վերջ կդնի համաշխարհային տնտեսության գլոբալացման միտումներին, որոնք վերջին երեսուն տարիներին գերակայում էին, և կխթանի հովանավորչական քաղաքականության նոր ալիքի առաջացումը՝ ազգային տնտեսությունները պաշտպանելու նկատառումով:



### Վահե ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ

Տնտեսագիտության  
թեկնածու, դոցենտ

1994 թ. ավարտել է ԵՐԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ): 1994-1997 թթ. սովորել է ԵՐԺՏԻ ասպիրանտուրայում՝ «Տնտեսագիտության տնտեսություն» մասնագիտությամբ: 1998 թ. առ այսօր զբաղվում է գիտամանկավարժական գործունեությամբ տնտեսագիտության տնտեսության ամբիոնում. սկզբում՝ որպես ասիստենտ, այնուհետև՝ որպես դոցենտ: 2018 թ. մինչ օրս ՀՊՏՀ «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի պալազ հեղափոխող է: Հեղինակ է շուրջ 50 գիտական աշխատանքների:

 ORCID - <https://orcid.org/0000-0002-0609-2837>

Մենք ապրում ենք դարակազմիկ ժամանակաշրջանում: Այն, ինչ կատարվում է վերջին ամիսներին, կարելի է ասել՝ բախտորոշ ազդեցություն կունենա ամբողջ մարդկության ապագայի վրա: Ռուս-ուկրաինական «ֆիզիկական» պատերազմն արդեն իսկ վերաճել է համաշխարհային տնտեսական պատերազմի: Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող աննախադեպ տնտեսական պատժամիջոցները փոխել են ամբողջ համաշխարհային տնտեսության լոգիստիկ կապերը: Միաժամանակ, Ռուսաստանի կողմից ուկրաինական տնտեսական ենթակառուցվածքների ոչնչացումը, ինչպես նաև սևծովյան նավահանգիստների շրջափակումը խաթարել են հացահատիկի համաշխարհային մատակարարման շղթան, ինչը սպառնում է սովի մատնել հատկապես աֆրիկյան շատ երկրների բնակչությանը:

Պատերազմը հանգեցրել է մատակարարման շղթաների խզմանը, պարենամթերքի և վառելիքի գների աճին ամբողջ աշխարհում, ինչի հետևանքով անորոշ տևողության և խորության տնտեսական ցնցումներ են առաջացել, որոնք կարող են դառնալ անկայունության առնվազն միջնաժամկետ գործոն երկարատև ռազմական գործողությունների դեպքում: Բարդ է կատարել աներկբա կանխատեսումներ համաշխարհային տնտեսության հետագա զարգացումների վերաբերյալ, սակայն ակնհայտ է, որ ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքները (տնտեսական ենթակառուցվածքներ, մատակարարման շղթաներ) շտկելու համար երկար տարի-

ներ և միլիարդավոր դոլարներ կպահանջվեն:

ՏՀԶԿ երկրների տնտեսական գնահատականների համաձայն՝ ռուս-ուկրաինական պատերազմը կհանգեցնի համաշխարհային ՀՆԱ աճի տեմպերի 1% կրճատմանը, ինչը հավասարազոր է 1 տրլն ԱՄՆ դոլարի (աղյուսակ 1):

Նման կանխատեսումները դեռևս չեն նշանակում, որ համաշխարհային տնտեսությունում սկսվում է նոր ռեցեսիայի փուլ, սակայն, միաժամանակ, նկատելի է աճի զգալի դանդաղում: Հետևաբար՝ մեծ է հավանականությունը, որ պատերազմի երկարաձգման պարագայում կշարունակվի համաշխարհային ՀՆԱ անկումը: Ըստ Fitch-ի գնահատականների՝ եվրագոտու երկրների ՀՆԱ աճի ակնկալիքները 4,5%-ից վատթարացել են մինչև 3%, ԱՄՆ-ում՝ 3,7%-ից մինչև 3,5%, իսկ Մեծ Բրիտանիայում՝ 5%-ից մինչև 3,8%<sup>1</sup>:

Մոտ ապագայում շատ երկրների համար հիմնական խնդիրը կլինի գնաճի զսպումը, քանզի գնաճի տեմպերն են այն մակրոտնտեսական ցուցիչը, որն առաջին հերթին ազդում է դրամավարկային քաղաքականության և սպառողների շրջանում ձևավորվող սպասումների ու վարքագծի վրա: Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ամբողջ աշխարհում գրանցվել է միջինում 2,5 տոկոսային կետով գնաճ, իսկ ՏՀԶԿ երկրներում վերջին տարում գնաճի տեմպը ներկայացված է գծապատկեր 1-ում:


Միայն պարենային ապրանքների գնաճի տեմպը արտահայտված է գծապատկեր 2-ում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

**Ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված՝ համաշխարհային տնտեսության շարժընթացի կանխատեսումների ճշգրտում, 2022 թ.<sup>2</sup>**


Կազմակերպությունը	Նոր կանխադրեումը	Նախորդ կանխադրեումը
Fitch	3,5%	4,2%
Moody's	3,6%	4,3%
OECD	2,4%	3,2%
S&P	3,4%	4,1%
Oxford Economics	3,8%	4,0%

<sup>1</sup> <https://gmk.center/posts/vliyanie-agressii-chto-zhdet-mirovuj-ekonomiku-iz-za-vojny-rf-i-ukrainy/>  
<sup>2</sup> Նույն տեղում:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**Գնաճի տեմպը ՏՀԶԿ երկրներում (բոլոր ապրանքների ու ծառայությունների համար)<sup>3</sup>, %**



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

**Գնաճի տեմպը ՏՀԶԿ երկրներում (պարենային ապրանքների համար)<sup>4</sup>, %**

Ըստ տարբեր աղբյուրների տվյալների՝ Ուկրաինային և Ռուսաստանին բաժին են ընկնում ցորենի համաշխարհային արտահանման 30%-ը և եգիպտացորենի արտահանման 20%-ը<sup>5</sup>: Այս երկու երկրները Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի շատ երկրների համար գյուղմթերքի հիմնական մատակարարներն են: Պատերազմի պատճառով լոգիստիկ խափանումներն արդեն իսկ բարձրացրել են հացի և մյուս հիմնական պարենամթերքների գները տարածաշրջանում: Իրավիճակն անկայուն է նաև Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) երկրներում: Դրությունն էլ ավելի է բարդանում այն

պատճառով, որ Ուկրաինան արգելել է նաև մսի, շաքարավազի, հնդկաձավարի և մի շարք այլ պարենային ապրանքների արտահանումը, իսկ ցորենի, եգիպտացորենի և արևածաղկի ձեթի արտահանման համար այժմ հատուկ թույլտվություն է պահանջվում:

ՄԱԿ-ն արդեն սով է կանխատեսում այն երկրներում, որոնք կախված են Ուկրաինայի և Ռուսաստանի գյուղմթերքի մատակարարումներից, ինչպես նաև նախանշում է համաշխարհային պարենային համակարգի փլուզում<sup>6</sup>: Համաշխարհային պարենային անվտանգության ապահովման նպատակով ԱՄՆ-ը պատրաստվում է

<sup>3</sup> Գծապատկերը կազմել է հեղինակը, աղբյուրը՝ <https://data.oecd.org/price/inflation#cpi-hm#indicator-chart>

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> <https://www.oecd-ilibrary.org/statistics>

<sup>6</sup> <https://www.un.org/development/desa/dpad/publication/world-economic-situation-and-prospects-as-of-mid-2022/>

հատկացնել 11 մլրդ դոլար, իսկ Եվրոպան՝ 2,5 մլրդ եվրո<sup>7</sup>:

Ռուսաստանի դեմ կիրառված տնտեսական պատժամիջոցները, ինչպես նաև շատ երկրների՝ ռուսական էներգակիրներից հրաժարվելը էներգառեսուրսների համաշխարհային շուկայում հանգեցրել են գների աճին: Ըստ Fitch-ի՝ Ռուսաստանը մատակարարում է աշխարհի էներգետիկ ռեսուրսների մոտ 10%-ը, այդ թվում՝ բնական գազի 17%-ը և նավթի 12%-ը<sup>8</sup>: Դալասի դաշնային պահուստային բանկի փորձագետների կանխատեսման համաձայն՝ էներգակիրների շուկայից Ռուսաստանի դուրսմղումը երկարաժամկետում, կարող է հանգեցնել համաշխարհային տնտեսության խոր ռեցեսիայի<sup>9</sup>:

Կանխատեսվում է, որ 2023 թվականից հետո համաշխարհային տնտեսության աճը միջնաժամկետ կտրվածքով կնվազի մինչև 3,3%: Միաժամանակ, նշվում է, որ պատերազմով պայմանավորված գնաճը 2022 թ.-ին զարգացած երկրների համար կկազմի 5,7%, իսկ զարգացողների համար՝ 8,7%<sup>10</sup>:

Համաշխարհային շուկայում հումքի (մասնավորապես՝ մետաղների և էներգակիրների) գների կտրուկ աճը հիշեցնում է 1970-ականների դեպքերը, երբ Միջին Արևելքի տարածաշրջանային հակամարտությունը համաշխարհային շուկայում նավթի գների աննախադեպ բարձրացման պատճառ դարձավ: Այդ ժամանակաշրջանը տնտեսագիտության մեջ ի հայտ բերեց նոր տնտեսական երևույթ՝ ստագֆլյացիա (լճագնաճ): Այսինքն՝ գնաճի բարձր տեմպերը զուգորդվում էին տնտեսական աճի ցածր տեմպերի կամ դրա բացակայության հետ: Ներկայիս իրավիճակը կարելի է գնահատել որպես համաշխարհային տնտեսության ստագնացիա (լճացում)<sup>11</sup>: Փոխվել են նաև դրամավարկային քաղաքականության իրականացման գործիքակազմը և կենտրոնական բանկե-

րի նկատմամբ վստահության աստիճանը (վերջինս ամրապնդվել էր տասնամյակների ընթացքում): Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, կանխատեսվող տնտեսական աճը՝ միջինում 3.5%, մոտենում է մինչևամավարակային մակարդակին, այնուամենայնիվ դա կարող է կանխատեսվածից ավելի դանդաղել, իսկ գնաճի տեմպը՝ ավելի բարձր լինել, քան սպասվում է: Սա կարող է հատկապես նկատելի լինել եվրոպական երկրներում՝ հաշվի առնելով վերջիններիս համեմատաբար ավելի մեծ կախվածությունը ռուսական գազի ներմուծման ծավալներից:

Քննարկելով համաշխարհային տնտեսության զարգացման հնարավոր միտումները՝ պետք է նշել նաև Չինաստանի կողմից աղքատ, հատկապես աֆրիկյան մայրցամաքի երկրների համատարած վարկավորման մասին, ինչը կարող է հանգեցնել համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամի: Գերմանիայի կանցլեր Շուլցն այս առիթով նշել է. «Իրոք, լուրջ վտանգ կա, որ հաջորդ խոշոր պարտքային ճգնաժամը կառաջանա այն վարկերի պատճառով, որոնք Չինաստանը տրամադրել է ամբողջ աշխարհով մեկ և իրականում չի վերահսկում դրանք, քանի որ այդ սխեմայում ներգրավված են շատ խաղացողներ»<sup>12</sup>: Կանցլերն անդրադարձել է նաև «Global Gateway» եվրոպական ներդրումային ծրագրին, որը Եվրամիությունն առաջ է քաշում որպես Չինաստանի «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» նախաձեռնությանը դիմակայելու գործիք: ԵՄ-ն մտադիր է Ասիայի և Աֆրիկայի երկրներում կատարել խոշոր ներդրումներ՝ հիմնական ռեսուրսներին հասանելիություն ձեռք բերելու և կանաչ տեխնոլոգիաները խթանելու համար: Ակնկալվում է, որ ԵՄ-ն մոտ 150 միլիարդ եվրո կհատկացնի Աֆրիկայում ենթակառուցվածքների զարգացման նպատակով<sup>13</sup>:

Որպես վերջաբան: Հասկանալի է, որ

<sup>7</sup> <https://www.ers.usda.gov/topics/food-nutrition-assistance/food-security-in-the-u-s/>

<sup>8</sup> <https://gmk.center/posts/vliyanie-agressii-cto-zhdet-mirovuju-ekonomiku-iz-za-vojny-rf-i-ukrainy/>

<sup>9</sup> <https://www.dallasfed.org/research/indicators/sa/2022/sa2205.aspx>

<sup>10</sup> <https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2022/04/19/world-economic-outlook-april-2022>

<sup>11</sup> World economic outlook, international monetary fund, 2022 apr

<sup>12</sup> <https://tass.ru/ekonomika/14752797>

<sup>13</sup> Նույն տեղում:

ռուս-ուկրաինական պատերազմը պայմանավորված է նոր աշխարհակարգի «կերտումով», որտեղ Ռուսաստանն իր համար ավելի մեծ դեր է ակնկալում, քան պարզապես հումքային երկիր լինելը: Աշխարհում ձևավորված իրավիճակը, կարելի է ասել, «խաչ քաշեց» համաշխարհային տնտեսության գլոբալացման վրա այն տեսքով, որի ակննատեսն էինք վերջին երեք տասնամյակների ընթացքում: Աշխարհը գնալով բաժանվելու է տարածաշրջանային խմբավորումների, որոնց շրջանակներում երկրները փորձելու են պաշտ-

պանել և իրենց, և սեփական տնտեսական շահերը: Համաշխարհային տնտեսության զարգացման այսպիսի միտումները կխթանեն հովանավորչական քաղաքականության նոր ալիքի առաջացումը՝ պաշտպանելու համար ազգային տնտեսությունները: Այս ամենը մեծապես կփոխի համաշխարհային կապիտալի շարժի հիմնական ուղղությունները, մատակարարման շղթաները, ինչպես նաև էներգետիկ շուկաների կառուցվածքը՝ ազդելով նաև հումքի շուկաների և դրանցում հաստատված գների վրա:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. World economic outlook, international monetary fund, 2022 apr.
2. <https://www.un.org/development/desa/dpad/publication/world-economic-situation-and-prospects-as-of-mid-2022/>
3. <https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2022/04/19/world-economic-outlook-april-2022>
4. <https://gmk.center/posts/vliyanie-agressii-cto-zh-det-mirovju-ekonomiku-iz-za-vojny-rf-i-ukrainy/>
5. <https://data.oecd.org/price/inflation-cpi.htm#indicator-chart>
6. <https://www.oecd-ilibrary.org/statistics>
7. <https://www.dallasfed.org/research/indicators/sa/2022/sa2205.aspx>
8. <https://tass.ru/ekonomika/14752797>

**Варе БУЛАНИКЯН**

*Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук, доцент*

АРМЕНИЯ И МИР

### ЧТО ЖДЕТ МИРОВУЮ ЭКОНОМИКУ? - ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ

В статье говорится о возможных тенденциях развития мировой экономики в условиях русско-украинской войны. В частности, речь идет о влиянии беспрецедентных экономических санкций, введенных Западом в результате российско-украинской войны, а также разрушения экономической инфраструктуры Украины Россией и блокады морских портов, на логистику мировой экономики. Война привела к разрыву цепочек поставок, росту цен на продовольствие и топливо по всему миру, что повлекло за собой экономические потрясения неопределенности и глубины. Это может быть как минимум среднесрочным фактором нестабильности в случае длительных боевых действий. Упомянется также, что в ближайшее время основной задачей для многих стран станет сдерживание инфляции, потому что темпы инфляции являются макроэкономическим показателем, который в первую очередь влияет на денежно-кредитную политику, потребительские ожидания и поведение. В статье делается вывод о том, что нынешняя российско-украинская война положит конец глобализации мировой экономики за последние тридцать лет, простимулирует появление новой волны протекционистской политики по защите национальных экономик.

**Ключевые слова:** *мировая экономика, экономическая инфраструктура, логистика, инфляция, продукты питания, энергоресурсы*

**Vahe BULANIKYAN***Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,  
PhD in Economics*

ARMENIA AND WORLD

**WHAT'S NEXT FOR THE GLOBAL ECONOMY? - DEVELOPMENT TRENDS**

The paper talks about the possible trends in the development of the world economy in the conditions of the Russian-Ukrainian war. In particular, we discuss the impact of unprecedented economic sanctions imposed by the West as a result of the Russian-Ukrainian war, as well as the destruction of the economic infrastructure of Ukraine by Russia and the blockade of seaports, on the logistics of the world economy. War has disrupted supply chains, rising prices on food and fuel around the world, resulting in economic shocks of uncertainty and depth. This can be at least a medium-term factor of instability in the event of prolonged hostilities. It is also mentioned that in the near future the main task for many countries will be to control inflation, because the inflation rate is a macroeconomic indicator that primarily affects monetary policy, consumer expectations and behavior. The research concludes that the current Russian-Ukrainian war will put an end to the globalization of the world economy over the past thirty years, stimulate the emergence of a new wave of protectionist policies to protect national economies.

**Keywords:** *world economy, economic infrastructure, logistics, inflation, food, energy resources*